

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արժաթ Մէճիտ պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար , թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել ա Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Առասուրիչ եկեղեցոյ վարի գրանը կից Նոր Գրատունը :

Ա Ղ Դ Ա Յ Ի Ն

Կարեւոր Առաջարկութեան Ըն

Իստիլաւարի Եէնի—մահալլէի թաղին պատուարժան Խորհրդոյն ատենապետ մեծապատիւ Սենեքերիմ էֆէնտին հետեւեալդէլին ուղղած է ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր :

«Ամենապատիւ Սրբազան Տէր իմ Ազգային եղբայրաց հաւասարակր յութեան և ազգային յառաջդիմութեան համար գրամի անհրաժեշտ պէտքը այս օրերս շատ ժամանակներէ աւելի խորհող ազգայնաց ոչադրութիւնը դրաւած է և այլևայլ կողմերէ այս մասին կարևոր առաջարկութիւններ կուղջուին որոյ անկ է : Ուրախութեամբ կնկատեմ այս շարժումն, և յուսով եմ թէ արգիւնաւոր պիտի ըլլայ : Արդարեւ ազդի մը համար յառաջդիմութիւնն ու անդորրութիւնն դժուարին — չըսեմ անհնարին — է, երբ, այս անհրաժեշտ պէտքը լրացած չէ : Նիւթուհանին պակասութիւնը դիտար պատճառ չէ՞ մեր ազգային ներկայ ապարդիւն վիճակին . չէ՞ որ շատ

ազգօգուտ խորհուրդներ անգործադրելի կմնան առ ի չգոյէ բաւական գրամոյ :

Այս խորհրդածութեամբ է որ ես ալ այս միջոցիս արժան կհամարիմ հետեւեալ առաջարկութիւնը Ձեր բարձր սրբազնութեան ուղղել, յուսալով որ անօգուտ չըլլար եթէ ոչադրութեան առնուի, և կամ կարծեւրով թէ գոնէ աղօս լլցս մը կուտայ այս մասին միտք ու հանճար յոգնեցունողներուն :

Ըստ որում՝ շատ տարիներու փորձը համոզեց զմեզ թէ՛ մեր ազգայնաց վրաց տրոյց խիստ անհաւասար բաժին մ'ընելով, այսինքն՝ մէկէն 3000, միւսէն՝ 2000, ուրիշէ մը 4500, և ուրիշէն աւելի կամ նուազ դումար տուրք ուղուելով, դժուարութիւններ կծագին և մինչև անգործադրելի կըլլան, և ըստ որում Սահմանագրութեան՝ կամ — սանկ ըսենք — հաւատարութեան ու պարտուց և իրաւանց սկզբունքը վերջին ժամանակներս մեր ազդիւն մէջ ալ բաւական տիրել սկսաւ, անհրաժեշտ հարկ մը կսեպուի ազգային տրոյց դրնթէ հաւատար բաշխում մը հաս

տատել, հաւարման գիւրբին եղանակաւ մը, որ իւրաքանչիւր ազգային մը տաղ իւր և գիւրբ և կվճարէ, և հետեւաբար կարելի կըլլայ գրամական անդորր վիճակ մ'ունենալ և ըստ արժանոյն խնամ ու հոգ տանիլ ազգային էական յառաջագիտութեան:

Ի՞մ առաջարկութիւնս է:

Ա. — Առ այժմ ազգահամար մը չունենալու պահասութեան մէջ կգտնուինք. ուստի հաստականաբար՝ մեր թուրքիւարձակ ազգայնոց թիւը 2 ուկէս միլիոն կհաշուենք: Այս թիւը տարապայման գեղջիկով միայն 300 հազար կհամարիմք ազգային տուրք վճարելու կարողութիւն ունեցողները թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառացի մէջ: Ասոնք երեք կարգի բաժնելու է. առաջին կարգը այսինքն 100 հազարը տարեկան 5 դրշտուրք վճարէ, երկրորդ 100 հազարը՝ երեք, իսկ երրորդը՝ 2 դրուշ: Ինչպէս յայտնի է՝ այս երեք կարգէն կգոյանայ մէկ միլիոն դրուշ:

Բ. — Այս արոց բաշխման եւ հաւաքման համար Պատրիարքարանի մէջ կամ ուրիշ յարմարագոյն տեղ մը շարաթիւր գտնէ երկու անշամ ժողովուելու եւ իւրաքանչիւր նստին ներկայ գտնուող անդամոց թիւը իբրև մեծագոյն մասն համարելու պայմաններով, ժողով մը հաստատելու է, որուն անգամները ըլլալու են մայրաքաղաքիս բոլոր թաղական խորհրդոց անդամներէն մէկմէկ հոգի, եւ՝ բոլոր առաջնորդանիստ քաղաքներու թաղական խորհուրդներու կողմանէ ցուցուած եւ մայրաքաղաքս զըտնուող մէկմէկ հոգի* —

Գ. — Մայրաքաղաքիս թաղական

* Գաւառացի համար այս բաշխումը աւելի գիւրբին կըլլար, եթէ՛ առաջնորդական սահմանաց բաժանմունքն՝ կուսակալութեանց համար կառավարութեան բրած սահմանական բաժանմանց համեմատ եղած ըլլար մինչև. ցարդ:

խորհուրդները իրենց թաղերու ազգահամարը կընեն՝ յիշեալ կերպիւ երեք կարգի բաժնելով, իսկ առաջնորդանիստ քաղաքներու թաղական խորհուրդները բոլոր վիճակին համար կշինեն այսպիսի ազգահամար մը: Այս ազգահամարները վերոյիշեալ ժողովին կուղղուին, եւ անոց համեմատ՝ տոմարները՝ — ըստ ամենայնի օրինաւոր — կյանձնուին ամէն մէկ թաղի ու առաջնորդանիստ քաղաքի ներկայացուցչաց, որոնք՝ որոշեալ գումարին անյապազ վճարման համար անդորրագիր տալով՝ իբրև պարտատէր կհամարուին:

Դ. — Այս գործողութիւնները ամեն տարւոց առաջին ամսագլխէն սկսելու, եւ աւարտելու են առ առաւելն մինչև երեք ամիս: Մինչև այս պայմանաժամը հեռուեալ հաւաքուած գումարը Պանք Օթոմանին յանձնուելու է ժողովին կողմանէ:

Ե. — Այս տուրքէն հաւաքուած միլիոն մը գումարը, Պատրիարքարանի եւ Հիւանդանոցի ունեցած 700 հազար դրուշէն աւելի եկամուտին վրայ աւելնալով որ կընէ մէկ միլիոն 700 հազար դրշ, ազգային պիտոյից կգործածուի հետեւեալ կերպով:

	ԳՂ:
Պատրիարքարանի	250,000
Հիւանդանոցի, բաց ի գըպրոցէ	400,000
Հիւանդանոցի մէջ նախակըրթարան եւ Արուեստարան (մէքթէպի սանայի), վասն որոցոց մայրաքաղաքիս եւ գաւառաց	300,000
Գիշերօթիկ բարձրագոյն Ուսումնարան, 100 Պօլսեցի եւ Գաւառացիին աղքատ մանչ տղոց համար, Գընալը կղզի կամ ուրիշ տեղ	300,000
Գիշերօթիկ բարձրագոյն Ուս-	

սուսնարան, 100 աղջկանց համար (ձևաաղործները կրնան նըպաստել ծախուց) (այս Չ դպրոցներուն մէջ տարեկան թոշակաւ ալ կընդունուին) 200,000

Ազգային 900 հազար գուրուշ հին պարտքը վճարել 6 տարուան մէջ, տարին տալով 430,000

4,600,000

Մուտքէն կաւելնայ 400,000

4,700,000

Ձ. — Մուտքէն աւելցած այս գումարը մէկը անի տարի Պանքան պահելու է. եւ այնուհետեւ գումարն ու տոկոսը ուրիշ տոկոսներու հետ՝ տարուէ տարի դպրոցէ ելած աղքատ մանչ տղոց վաճառականական դրամադրխի համար գործածելու է հետեւեալ կերպով. — Ազգային կամ օտարալի պատուաւոր վաճառականի մը քով դնելու է տղան, որոշեալ գումար մը այն վաճառականին յանձնելով, որ վաճառականութեամբ շահնցունէ եւ շահովը անոր առօրեայ ծախքը հոգայ, մինչեւ իւր կամ ուրիշին քովը գործածուելու կամ ինքնազուրի վաճառական մ'ըլլալու վիճակի հասնի. Այնուհետեւ վաճառականին աւանդուած գումարը եւ առնելու է, եւ տղէն ալ անոր տոկոսը ստանալ իրեն ծառայած բոլոր ժամանակին համար:

Է. — Ազգային այս ընդհանրական մատակարարութեան համար, կառաջարկեմ որ, ժամանակին Վարչութեան ժողովը Ս. Պատրիարքին հետ նախագահելով արոց կեդրոնական ժողովին, իւրաքանչիւր ճիւղերու համար առանձին Խորհուրդներ կամ Հոգաբարձութիւններ ընտրուին, Յ կամ Ղ անդամէ բազմապեալ եւ ժողովին կողմանէ սահմանեալ հրահանգներ տրուին իւրաքանչիւրին:

Բ. — Այս Խորհուրդները կամ Հոգաբարձութիւնները ամեն երեք ամիս հա-

շիւ տալու են կեդրոնական ժողովին, եւ տարեդրին՝ մանրամասն տեղեկագիր: Կեդրոնական ժողովն ալ, տարեկան ընդհանուր տեղեկագիր հրատարակեալները կայացունելու է երեսօխտանաց եւ ընդհանուր Ազգին:

Ահա՛, Սրբազան Տէր, այս է իմ առաջարկութիւնս, զոր՝ կարծեմ՝ կրցայ բաւական պարագաներովը ներկայացունել: Չեր բարձր Սրբազանութիւնը կրնայ մակարեւել թէ՛ վերջ նշանակուած գումարներով շատ անգորր ու գոհացուցիչ կերպով կը մատակարարուին Պատրիարքարանը, Հիւանդանոցը եւ ուրիշ ըլլալիք հաստատութիւնները, եւ միանշամայն ազգային հին պարտքը կվճարուի թէ՛ այս եղանակաւ սուրբի մը հաւաքումը շատ հաւանական է որ մինչեւ Չ միլիոն արգիւնք դոյացունէ: Եկնդրեմ, հաճեցէք ուշադրութեան առնել եւ ժամ յառաջ ազգային ընդհանուր սուրք մը հաստատել, որ սլէս զի «ազգային յառաջիմութիւն» բառերը ընկ խօսքերու եւ գրերու մէջ չգտնուին, այլ ազգը իրօք յառաջ գիմութեան ընթացքի մը մէջ մտնէ, որուն փափաքելով՝

Մնամ ամենախոնարհ ծառայ
Չերդ բարձր Սրբազանութեան
ԱՅՆՆԵՐԻՄ ՆԱՐՏԱՐԱՊԵՏ

27 դեկտ. 1869

Իսակիւտար

Ընդհանուր արոց համար մինչև հիմա եղած առաջարկութեանց յարմարագոյնը կհամարիմք Մեժ. Սենեքերիմ էֆէնտիին այս առաջարկութիւնը: Տեսնենք, մեր մեծարգոյ պաշտօնակիցք եւ այլք ինչպէս կը դատին:

